


ՏԷՐ ԵՒ ՏԵՐՈՒՆ
Վ. ՓՈՐՏՈՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ ըրազի
ԳԱԶԻՐԷ (Նամակաւորութիւն)
Թիւ.

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)
Boîte Postale No.



ԼՈՐ Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահլիճ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'եկ տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարելի են

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ Ընկերութեան
Պատ. Գիւլանն հետեւեալ պաշտօնական ազ-
գարարութիւնը կը զրկէ մեզ ի հրատարա-
կութիւն :
Մեր Պատ. Ընթերցողաց մասնաւոր
ուշադրութիւնը կը հրաւիրենք գէպի ներ-
կայ ազգարարութիւնն :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Պատիւ ունինք յայտարարելու որ ըստ
որոշման Ընկերութեանս Օգոստ 27. ԲՂ. Ե.
բեկոյեան տեղի ունեցած Խառն ժողովոյն,
յետ այսու Գործադիր ժողովոյ այն անկէ
գրութիւնները, որոնք Մայր-Գիւլանի կնիքն
ու ստորագրութիւնները չ'են կրեր, պէտք
է անվաւեր նկատուին ց'որո անօրինութիւն :

Ի գիւլանց Մայր-Գիւլանի Լաւրան-
Ընթերցատուն Ընկերութեան .

- Ա. Ատենապետ . Ա. Ատենապետ.
- Ե. Քէրէմի-Քէրէմ . Ա. ՊԱԼԱՆ .
- 27 Օգոստ. 1900 (Կնիք)
- Գահիրէ :

ՈՐԲԱՆԱՍՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՁԸ

Աղէքսանդրիոյ օժանդակ Որբանամ-
Ընկերութիւնը, այս տարի՝ 6 որբեր որդե-
գրեց Ակնայ քաղաքին Որբանոցին մէջ խը-
նամելու համար :

Առաջին տարուան ծախքերուն համար
36 օսմ. ոսկի զրկուեցաւ Որբանոցին Խը-
նամակալութեան որ բաղկացած է տեղւոյն
երեւելի ազգայիններէն, Առաջնորդին նա-
խագահութեան ներքե .

Գործադիր ժողովը նաև պահանջ տը-
նի երկու Քրէտի ֆոնտիէի արժեթուղթեր,
որոնք յատկացեալ են յիշեալ որբերուն
երկրորդ տարւոյ ծախքերուն :

Առիթէն կ'օգտուիմ կարծիքս յայտնե-
լու համար Որբանամ Ընկերութեանց նիւ-
թական մատակարարութեան կենսական խն-
դրոյն վրայ, զոր նոր-կեանք, Կիպրոսի Որ-
բանոցին տարեկան տեղեկագրին առթիւ կը
յուզէ առաջնորդողի մը մէջ : Կը մտածեմ
որ, որբերուն օգտին համար, անհրաժեշտ
է որոշել միանգամ ընդ միշտ այն եղա-
նակը՝ որով պէտք է գործածուին այդ տա-

րարարտ անմեղներուն անունով հանգանակ-
ուած լուծմաները :

Որքան գիտեմ, մինչև հիմա, երկու
եղանակներ կան ի գործադրութեան որուն
կը հետեւին Աղգ. Որբանամները :

Առաջինը կը կայանայ ընկերութեան տարե-
կան հասոյթին անբողջ գումարը յատկա-
ցնել այնքան թուով որբերու որքան անց-
նիւր որբի մէկ տարւոյ միջին հաշուով ծախ-
քը կը թոյլատրէ : Օրինակի համար, զը-
նենք մէկ որբի համար 7 ոսկի իբր տարե-
կան ծախք : Ենթադրելով որ բաժիններուն
մէկ տարւուան գումարը 42 ոսկի կը հաս-
նի, ընկերութիւնը պարտի այս հաշուով,
6 որբերու հոգատարութիւնը ստանձնել :
Եթէ սխալ չ'եմ հակցած, այս մէթոտը
պաշտպանել կը թուի նոր կեանք :

Երկրորդը կը կայանայ հասոյթին գու-
մարը մնաւոր գործածել և մնացեալ խը-
նայել մինչև որ բաղադրեալ տոկոսով,
քանի մը տարիէն բարձրանայ գումարի մը
որուն եկամուտը մնայուն կերպով պիտի ա-
պահովէ ողջ թուով որբերուն տարեկան
ծախքերը :

Այսպէս, հաստատուն դրամագլուխով
մը օժտուած, հաստատութիւնը, ինչպէս
առևտրական տուն մը, ապահով հիմերու
վրայ կառուցուած պիտի ըլլայ : Կիպրոսի
Որբանոցին Խնամակալութիւնը, որ վաճա-
ռականներէ կը բաղկանայ, այս եղանակը
նախամեծարած է :

Արդ խնդիր է թէ այս եղանակներէն
ո՞րն է յարմարագոյնը : Ըստ իս, լուծումը
պէտք է փնտռել այս երկուքին չափաւոր
բաղադրութեան մէջ :

Նախ, պէտք է ընդունիլ սա երկու ըս-
կըրունքները որոնք այնքան պարզ որքան
անհերքելի են :

Ա. Որքան հար է շատ որբեր որդե-
գրել :

Բ. Որբի մը նկատմամբ պարտականու-
թեան կատարման մէջ բացարձակապէս ուղ-
ղամիտ ըլլալ :

Այս սկզբունքներուն համեմատ դատենք
վերև ակնարկուած մէթոտներուն գործնա-
կան արժէքը :

Առաջին մէթոտը կը գոհացնէ շատ թը-
ւով որբեր խնամելու սկզբունքը . քանի որ
բողջ գումարը կը յատկացնէ որբերու : Բայց
կարելի է առարկել . եթէ ընկերութիւնը
կազմալուծուի յաջորդ տարին, ո և է պատ-
ճառով մը, կամ գէթ անդամներուն թիւը
նուազի, որբերը առաջին պարագային մէջ
անբողջութեամբ, և երկրորդին մէջ քանի
մը հատը միայն, պիտի լքուին ի չ'գոյէ

նիւթական միջոցներու : Այն ատեն գործը
անհեռատես և անուղղամիտ եղած պիտի
չ'ըլլայ : Գալով երկրորդին՝ այս պատահա-
կանութիւնը կանխահոգալու առաւելութիւ-
նը ունի : Բայց ոչ միայն չը կրնար շատ
թուով որբեր ստանձնել . այլ նաև այդ
կանխահոգ միջոցը չափազանցութեան կը
տանի : Հրաշալի կերպով կը յարմարի երբ
խնդիրը վարժարանի կամ հիւանդանոցի վը-
րայ է, բայց ոչ Որբանոցներու, որոնք
բացառիկ պարագաներէ ծնունդ առած առ-
ժամանակեայ հանգամանք մ'ունին :

Ուստի, երկրակացնելով, պէտք է իբր
գործնական կանոն ընդունիլ որդեգրեալ
որբերուն առ նուազն երկու և առ առաւե-
լն հինգ տարուան ծախքերը ապահովել :
Խնամակալութիւնը պարտականութիւն չ'ու-
նի . որբերը, անգամ մը չափահաս և ար-
հեստի մը տէր, յաւիտեան պահել ինչպէս
որ իրաւունք չ'ունի տարի մը պահելէ յե-
տոյ զանոնք լքանել : Միւս կողմէն, հո-
գածութեան առարկայ պարտին ըլլալ մի-
այն և միմիայն կոտորածներուն կտակած
այդ հէզ արարածները : Ու մինչդեռ հառ-
տատուն դրամագլուխ ստեղծելու պիտի զը-
հենք ժամանակը և լուծմաները, անդին ա-
նոնք արդէն իրենց յետին չունը պիտի փը-
չեն անսուաղ ու սարսոագին, և կամ, պի-
տի մեծնան զուրկ ապրուստի միջոցներէ ու
կրթութենէ, ինչպէս վայրի բոյս մը որ
պարտիպանին խնամքները չ'տեսաւ :

Աղէքսանդրիա 25 Օգոստ .

Ա . Ճ

ԹՂԹԱՅՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԺՈՂՈՎՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ըստ ԱՐՇԱԼՈՅՍ Ի Բ. տարւոյ թիւ 102 ի
մէջ եղած յայտարարութեան, կիրակի Օգոստ .
26 ին « Պատ տը լ'Աֆրիք » ի մէջ տեղի ունե-
ցաւ Լաւրան-Ընթերցատան տարեկան Ընդհ.
ժողովը . ուր սակայն փոխանակ ըստ յայտա-
րարութեան ժամը 81) 2 բացուելու ատենը,
երեք քառորդ ժամ յետաձգուեցաւ, ԳՈՐԾ . ԺՈՂՈՅ
անդամոց գալուն սպասուելովով, 2 տոկոս-
թիւն մը, որ ի զուր տեղի ունեցաւ :

Ու այսպէս ժամը 9 ը քառորդ անցած,
Գիւլանը՝ յարգելով իր խօստումը բացաւ ժողո-
վը : Նախ ամեն անոնք, որոնք արդէն անդամ
էին և անոնք, որոնք անդամացիլ կը փոփա-
քէին մի առ մի դրեցին իրենց անունները : Ա-
հա այս առաջին քայլին մէջ յայտնուեցաւ նեղ-

սիրտ պարտնենքու գիտաւորութիւնը, որոնք թէև անգամներ ի սկզբան, բայց չ'ուզեցին իրենց անուաները դրել: (արգարութեան համար, ըստի սակայն թէ եւ ոչ մէկու մը ստիպում եղաւ իր անունը գրելու համար):

Գալով ներկայից ստորագրութեանց տուած արին մէջ գրուելու պահուն, տնտեսող պարտնենքին: — որոնք իրենց գէտքն աւելի կ'ուստէրի մը սպաւորութիւնը կը թողէին այցելուի մը վրայ, քան թէ լուրջ հակաճառողի մը, հակառակ իրենց յորջորջած, Հայրենիք եւ Սէր, սրբազան բառերուն: — մին թերեւս լիազօրը այդ կէս կողմացած պարտնենքուն ու թերեւս բացակայից փոխանորդը, միշտ կը բողբէր եւ ամեն առարկութեանց կը պատասխանէր: — իրաւացի թէ անիբաւ: — այդ տարբեր խնդիր է: Հակառակ իր պաշտպանողական դերին, միեւնոյն աստի, չէր կարող վրայն գոցել ու յաճախ կը գործածէր « Գործ, Ժողովոյ զեղծումները » ստուերը, հաստատական արտասանութեամբ:

Թեպէտ իրենց խօսքերը մերթ կը հակասէին դիրքը, սակայն կարծես սա ըսել կ'ուզէին թէ՛ պայմանաժամ մ'որոշելով, պէտք է ստիպել Գործ: Ժողովը իր հաշիւներն ու հրատարականը յանձնելու եւ այդ որոշեալ օրը ու նոր քննարկութիւնն ալ այդ օրուան յետաձգել, նաև գիտել կուտային թէ՛ ներկայից մէջ կային նաև նոր անդամակցողներ, որոնք ըստ իրենց կարծեաց անձեռնմտ պէտք է ըլլային նոր քննարկութեան: Չ'եմ գիտեր թէ իրենք եւս, նախորդ տարին քննարկութեանց ձեռնարկած պահուն, տարի մ'առաջ անդամակցած էին Լատան-Բնթերցատուն չ'գոյ ընկերութեան: Թէ ոչ անդամակցած ատենին իսկ, իրաւունք վայելած էին նաև քուէարկութեանց մասնակցելու:

Բայց չ'եմ գիտեր նաև թէ, ո՞ր օրէնքէն կ'օրինակեն կանոն մը, որը մտնել կ'ուզեն եւ սոյն ընկերութեան մէջ, իրեն թէ՛ Գործ: Ժողովոյ կը վերաբերի եղեր տարեկան Լ'նդէ: Ժողովոյ գումարման օրը որոշելը: Թող որ որոշեալ օրը նախապէս ինք, Գործ: Ժողովը եւս ընդունած էր:

Այս ամեն պատճառաբանութիւններուն, միայն մէկ մեկնութիւն մը կրնանք տալ: այսինքն թէ՛ Գործ: Ժողովը իր բացակայութեամբ ուզեց նոր-Օրի մէջ իր ըրած յայտարարութիւնը յարգել սալ ընկերութեան, որուն այսպիսի սի առաջարկ մը լինելու պարտադանցութիւնը, նորանմար Գործ: Ժողովոյ մը իրաւասութեանը կողմը կրնայ նշանակուած ըլլալ, որ առանց նախապէս Մայր-Իւսանին հետ բանակցելու, այդ եղբակցութեան կարենայ յանգիլ:

Գործ: Ժողովը քուէարկութեան օրը երկու շաբաթ յետաձգելով, նոր առարկութիւն մ'ալ հնարել խորհի թերեւս: այսինքն Սէլիմ փաշայի ապարանքը խախտու կամ խոնաւ համարուի, առաջադրեալ գումարման նոր յետաձգում մը ձեռք բերելու համար եւ այսպէս, պարտապանին առ պարտատէրն ըրած խօստումներուն նման վաղը ըսել, իսկ երբ այդ վաղը գոյ, յաջորդ վաղուան ձգել, եւ վերջապէս այդ անհատնում վաղուան շարքերով շարունակել, անորոշ ժամանակուան մը համար, մինչև որ մեծ վտանգը գրան սեմէն ներս դնէ իր օտքերը: Ասիկայ կարելի էր, եթէ սակայն ընկերութեան անդամները լուռ կենային, իրենց արդար իրաւանց դէմ ի գործ դրուած զեղծումներուն հանդէպ: . . .

S. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Գահիրէ 28 Օգոստ. 1900

ՎԱՍԻ ՀԱԼՅԱՅԻ ԳԵՐ — ՊԱՏԳԱՍԱՒՈՍԻՆ

ԱՌ ՍՕ .

Գահիրէի հայերը իրենց պատգամախօսը պիտի ունենային, եթէ նոր-Օր ի 24 համարի մէջ երեւցող ՍՕ ին չ'պակէր ետոտանի մը եւ քուէմի յատուկ իմացական կարգութիւնը:

— կուզէ բան մը գրել, առանց ինք ալ որոշապէս գիտնալու թէ որո՞ւ պէտք է ուղղել իր հայտնայնքը:

Երեւով կ'սկսի վճիռ տալ Լատան-Բնթեր-

ցատան Գործ: Ժողովոյ համար. ու եթէով կը ճգնի քուէարկութեան իրենց գործածել յիշեալ ժողովի գործունէութեան եղանակը խղճմտօրէն քննադատողներու գէտ՝ առանց ո՛ր եւ է փաստացի հերքում մը մէջ բերելու:

Պարոն ՍՕ. ինչո՞ւ սահմանափակ խորհելով կամայականութեանց դէմ բողբողները խճբը-ծող եւայլն կ'անուանէք. ինչո՞ւ յատկօրէն չ'էք խօսիր ու ի՞նչ կոչընդ պէս կ'աշխատէք գոյներու վրայ ճոռոմաբանել: Եթէ դուք անպատէն կրնաք ճշմարտութեանց ծուծը թափանցել, ինչո՞ւ ձեր կողմի վրէժովը հրապարակը չ'էք թնդացներ: արդէն գիտնալու էք թէ հասարակական հիմնարկութիւնները որ՞քան պէտք ունին բանիմաց գործիչներու:

Սակայն ուրիշ անգամ դուք զձեզ չ'խաբէք, աչքի առաջ ունենալով որ, Մօլիէտի եւ Պարոնեանի պէս գրագէտներու գործերը կարգացողէն մինք աւելի տարբեր չ'ունենք մը սպասելու իրաւունքը ունինք:

Եթէ ոչ ձեր անհամ տողերով փոխանակ զեղծ գործիչներ պաշտպանելու, անոնց գործերը մերկացնելու վտանգին մէջ պիտի իյնաք միշտ: Ինչ կ'ըլլար, գոնէ քիչ մը ինքնուրոյնութիւն յոյց տայիք:

Առ այժմ Պարոն ՍՕ. զձեզ չենք զրկեր մեր արգահատանքէն:

ԳԱԼՅԱՆ.

ԱԶԳ

Գահիրէի Լատան-Բնթերցատուն ընկերութեան Օգոստոս 26 ին գումարուած տարեկան Ընդհանուր, Ժողովոյ մէջ Մայր-Իւսանի եւ Գործադիր Ժողովոյ նոր ընտրութիւններ կատարուելով՝ քուէից բացարձակ առաւելութեամբ հետեւեալ ընտրութիւնները կատարուեցան:

- ՄԱՅՐ-ԻՒՍԱՆ
Տիար Աւետիս Պալեան . Ա . Ատենապետ .
» Տոքթ. Ա . Յակոբեան Բ .
» Երուանդ Գերէսիթէճեան Ա . Ատնդ .
(1) » Ներշէ Թորոսեան Բ .

- ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ
Տիար Մարգար Գալֆախան
» Տոքթ. Գէորգ Էվլեան
» Արտաշէս Մըրըրեան
» Արմենակ Փափաղեան
» Նաչիտ Գաբրիէլեան
» Օնիկ Թու.մանեան
» Սիմոն Զրովեան
Գահիրէ 27 Օգոստ. 1900
(ԿՆԻՔ)

(1) Տիար Ե . Թորոսեան կը հրաժարի իր նոր պաշտօնէն եւ շաբաթ օրուան թիւով հրապարակաւ պիտի ապ իւր հրաժարականը, հոն բացատրելով հրաժարման պատճառներն:

նուճէն վերջ, բացատրեցի թէ՛ դա Աղբա-տախնամ Ընկերութեան գանձանակն է, որուն համար բերանացի ըսուած է մեզ յայտարարել, բայց տեղւոյ անձկութեան պատճառաւ յետաձգուած է:

Նոյն վայրկեանն էր սր Աղբատախնամ Ընկերութեան Գործ. Ժողովոյ յարգելի Ատենապետ Տիար Յակոբ Գերբճեանի կողմէ հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը կ'ստանայի որ թերահաւատ ընկերոյս կասկածներն փարատելու ծառայեց:

ԱԶԳ

Աղբատախնամ Ընկերութեան Գործ. Ժողովոյ կը փութայ յայտարարել յարգոյ Հայ Հասարակութեան թէ՛ յետ այսու եկեղեցւոյ չըջափակին մէջ ինպատ ընկերութեանս գտնուած պնակին տեղ, Գաղաք. Պատ. Ժողովոյ հրամանաւ պիտի չըջափայ գանձանակ մը:

Ի գիտութիւն բարեսէր ժողովրդեան կը փութանք յայտարարել զայս:

Աղբատախնամ Ընկերութեան Գործադիր Ժողովոյ (ԿՆԻՔ)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 27 Օգոստ. — Գերմանական աղբիւրէ առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Պօքըրները Իունկ-Չունի մօտ կը համախմբուին:

2000 Գերմանացիներ Բէքին հասան: Ճարտնական հեռագիր մը կ'իմացնէ թէ՛ 6000 Ձինացիներ թնդանօթներով կը յաւալանան Եան-Թունի հակառակ կողմը գտնուող դաշնակիցները գրաւելու համար:

Լոնտոն 27 Օգոստ. — Մուսա, Ճարտնական պատերազմանաւր Գօնէա մեկնեցաւ:

Լոնտոն 27 Օգոստոս, — Եօհանէսպուրկի եւ Քրիկէրատորֆի մէջտեղը գտնուած երկաթուղւոյ գիծը երէկ երեկոյ կտրուեցաւ:

Գնդապետ Ռիտլէյ եւ « Էմբէրիալ Եօմանրի » պատկանող 275 զինուորներ ամոյս 24 ին վիւպուրկի վրայ յարձակեցան:

Զօրքերը քաջաբար դիմադրեցին, մինչև որ երեկ առաւօտ զօրավար Պոլուս Համիլթօնի կողմէ պէտք եղած օգնութիւնները հասան զօրավար Պօստփուրի բանակին: գոյքերը հանդերձները ինչպէս նաև թանկագին գրութիւնները այրեցան:

Հարիսմիթի մէջ 169 նոր հպատակներ ընդունուեցան:

Իրէթորիա 27 Օգոստոս. — Պէլֆաթի մօտի Պօէրներուն դիրքը խիստ զօրաւոր է: ճակատը որ 25 մղոն լայն է, կը գրաւէ կարգ մը կիսաբլուրակ լեռներ, որոց մօտեանալու համար ճահիճներէ պէտք է անցնել: Զօրավար Պուլլըրի զօրքերը երեք օր անդադար առանց արգիւնքի յարձակեցան առտոնց վրայ: Թնդանօթի կուր մը տեւած է ամբողջ օր մը, մեր նաւային թնդանօթները արգիւնքին թնդափիին մէկ շրջանիկ շարժումը:

Լոնտոն 27 Օգոստոս. — 3651 հոգի Քէյք պիտի մեկնին այս կիսամետային մէջ:

Պէլֆաթ 27 Օգոստոս. — Մեր զինուորները բոլոր կիրակի օրը կուրի մէջ էին: Սըր Ռեուլըրը Պուլլըրի Տալմանութաի հա-

րաւային արեւմուտքը, Բօլքարիու կեդրոնը և Թրէնչը Պէլքասթի հիւսիսը : Թշնամին յամաւարար դիմագրեց, երեք հատ « Լօնկթօմ » թնդանօթներ և ուրիշներ չ'զարգեցան երբէք մեզ ումակոծելէ, կռուին վայրը շատ դժուար է, վերջալոյսին մեր զօրքերը իրենց գիրքերուն վրայ բանակեցան, մինչև հիմա 5 մեռեալ և 58 վիրաւորեալ կայ :

Վինպուրկ 28 Օգոստոս . — Այսօր քաղաքը երեք կողմէն յարձակում կրեց, Պրբիւս Համիլթօն զօրավարը ետ մղած է յարձակողները և գերի բռնած է հրամանատար Օլիվիէն և իր երեք որդիքը :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. ԽՏԻՎԸ

Ն. Բ. Խտիվը, երեկ երեկոյ Աղեքսանդրիա հասած և ուղղակի Մօնթազալի պալատը գնացած է :

Տեղական թերթերը բացարձակապէս անակնկալ կը գաննեն Ն. Բ. Խտիվի սոյն ժամանումը :

— Բ. Դուռը արժան դատած չ'է նկատողութեան առնուլ Անգլիոյ դեսպանի այն առաջարկը, որով Սասնոյ մէջ պատահած կոտորածին քննութիւն մը կը պահանջէր : Բ. Դուռը, ըստ իւր քառի սովորութեան կը հերքէ այդ լուրերու ըստուգութիւնը և կը յայտարարէ թէ՛ Սասնոյ Հիւպատոսը կարող է երթալ և վերաբրնել եղելութիւնը :

— Այս առաւօտ 13 տարեկան խպտի աղջիկ մը ոստիկանութեան դիմելով փափաք յայտնած է իսլամական կրօնքը ընդունելու :

Ոստիկանութիւնը անմիջապէս խպտիներու պատրիարքարանին ծանուցած է եղելութիւնը :

ՀԱՇԻՇ . — Երեկ Տեղական Կառավարութիւնը ձեռք ձգեց 400 հօսա հաշի, որ երկու տեղացիներ քաղաք մտցնել կուզէին աճապարանքով մը :

Մաքսախոյսները ձերբակալուեցան :

Տեղացի ընտանիքի մը արու զաւակը որ երկու տարիէ ի վեր կորսուած էր, գտնուած է : Ծնողքը ոստիկանութեան հազարգած են մանկան գտնուելին :

Մանուկը այժմ 6 տարեկան է և լախնամուած Գաղաքիս մէջ տեղացի ընտանիքի մը տունը :

Շարժում էն կը տեղեկանանք թէ՛ Թոգաթի Հայերը ամենէն գործնական մտածումը ունեցեր են, Եկեղեցիին բոլոր արծաթեղէնները 1600 ոսկիի ծախելով անոր տեղ կալուած մը գնելու, որուն արդիւնքը վարժարանին պիտի յատկանայ :

Թոգաթցիք ուրիշ դրական միջոց մը մտցած են ի գործ գնել, այն է՝ Քահանաներն ալ միւս գոյքերուն հետ մեկտեղ ծախել և հասութարեր կալուածներ գնել : Բայց կ'երեկ թէ՛ այն տեղիներն ալ այս տեղիներուն պէս Այք կուտ չ'են արժեր : (Բացառութիւնք յարգելի են միշտ)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Բարիկ 20 Օգոստ . 1600

Շարժութ օր Օգոստ . 18 ին ցուցահանդէսին մասնակցողներուն պարգևարաչութեան օրն էր : Պարգևարաչութեան հանդէսը տեղի ունեցաւ *solenno* դահլիճի (ցուցահանդէսին մէջ), որն 12,000 մարդ կրնայ բովանդակել՝ նստած . քսան հազար հրաւիրագրեր զրկուած էին ալ ու ձախ և հրաւիրագրի ընդունողը կարող էր երկու հոգի ալ հետը բերել : Մենք ալ իւրեւ Տընօրէն քառի ճուղիչի Հայկական ճիւղին հրաւիր ստանալով շարժութ ժամը 3 ին (ըստ հրաւիրագրին) ներկայ գտնուեցանք այդ հանդիսին : Ըսենք որ մենք հաղիւ կարողացանք մի կերպ ներս սպրդիլ մեր խմբագրողի քարդը ներկայացնելով և հրաւիրագրերը ցոյց տալով, վստահի շատ շատեր իրենց հրաւիրագրով իսկ չ'էին կարող ներս մտնել : այնքան շատ էին եկողները . չ'է որ այդ օրը ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մարդկանց մտքին արտադրութեան պարգևարաչութիւնն էր, 12000 տեղերու համար հարիւր հազարներով սիրահարներ գտնուած էին, բայց միայն առանձնաշնորհեալները կարողացան օգտուիլ, իսկ շատ շատեր քթերնին կախած դռնէն մեկնեցան, բազմութենէն ներս ոտք դնելը անկարելի լինելով : Պարգևարաչութիւնը վերջացաւ շատ ուշ՝ մօտ ժամը 6 ին : Այս առթիւ Բարիկ բոլոր շէնքերը զարդարուած էին ամբողջ օրը : Իսկ երեկոյին այն ամեն շէնքերը լուսավառուեցան : Մենք այդ օրը մինչև կէս գիշեր ցուցահանդէսին մէջ անցուցինք այնտեղի տօները տեսնելու որոնք շատ աւելի հետաքրքիր էին և կամ լինելու էին : Մասնաւոր և պաշտօնական յայտարարութիւններ ուրբաթ օրէն սկսած, ծրագիրներ կը բաշխէին ցուցահանդէսի մէջ տեղի ունենալիք տօներու մասին : Մենք միայն միւս բոլոր հրաշալիքները մէկ կողմ թողլով պիտի խօսինք միայն Սեն գետի վրայ տեղի ունեցած նաւային տօնին և հրախաղութեան մասին :

Ժամը հաղիւ թէ ինն է Սէնի երկու եզերքներուն վրայ մէկ կողմէն Պետութեանց պողոտան և միւս կողմէն Բարիկի փողոցը և հին Բարիկի կողմը, ասեղ ձգելու տեղ չ'կայ . յետոյ իմացանք որ այդ երեկոյին ցուցահանդէսին մէջ 800,000 մարդ կայ եղեր, իսկ գետի երկու եզերքներուն վրայ, առանց չափազանցելու կրնանք ըսել թէ առնուազն 5-600 հազար 180 նաւերը (մեծ ու պոտիկ) պտոյտներ, արչաններ, պարեր և հազարումէկ դժուարին շրջումներ կը կատարէին Ամեն կողմէ նուազածութիւններ՝ Ռուսական, ֆրանսական, անգլիական և բոլոր ազգերու ազգային երգերը կը լսուին իրարու ետևէ կամ միեւնոյն ժամանակ, ծափահարութիւններ, կեցցէնէր, հուրճ, բրավօներ, և ամեն լեզուով հիացման բացազանցութիւններ, անթիւ անհամար են Իսկ միւսնոյն ժամանակ 5-10-20 տեղերէ ելած հրախաղութիւնները, Պենկալեան լոյսերը (ամեն գոյներով) անկարելի է նկարագրել, ոչ լեզու և ոչ գրիչ կրնայ բացատրել Եղաւ վայրկեան մը յորում մարդ չ'գիտեր թէ այս աշխարհի մէջ է թէ վերափոխուած է ուրիշ աշխարհային աշխարհ մը հրախաղութեանց որոտումները կարծել կուտար թէ աշխարհի վախճանին ականատես կը լինինք :

մարդիկ կային, որոնք այնտեղ խոնուած էին նաւային տօնին մասնակցելու : 180 նաւեր մասնակցեցան տօնին, ամենքը անբացատրելի գեղեցկութեամբ զարդարուած և լուսաւորուած էին : Մօտ ժամը 9 1 (4 ին տօնը սկսաւ, տեսնելու էր թէ ինչպէս այդ

Հրախաղութիւնները վերջացան իսկ նաւային տօներն ալ վերջանալու մօտ էին երբ մենք (ժամը մօտ 11 Յ) 4 սարսափելի տաքէն նեղուած, բարեկամի մը հետ սկսանք քալել : Պետութեանց պողոտայէն անցնելով ֆրանսացի նկարիչ բարեկամիս հետ բան մը խմելու զբաղած էինք Իտալական տաղաւարին մօտ, երբ յանկարծ գոռում մ'էր բողաւ և բուրդին ուշագրութիւնը գրաւեց :

Ամենքն սկսան աստ անդ վազել, աղաղակներ, ճիշեր, մարդոց սիրտերը կասր կտոր ընէին :

Պետութեանց պողոտայէն դէպի Աղեքսանդր Գ. ի կամուրջը տանող փայտէ կամուրջին մէկ կողմը փլչելով 100 հոգի չափ մարդիկ վար թափած, մեռած կամ վիրաւորուած էին :

Մենք ականատես այդ արկածին, անցողներուն հազար ու մէկ հարցումներուն ենթարկուեցանք . բարեբախտաբար մէկ երկու վարկենէն ոստիկաններու շոկատ մը հասաւ և այդ փլած կամուրջէն անցիլը արգելեց : Թէլէֆօնով մօտակայ հիւանդանոցներէն հիւանդներու յատուկ կառքեր հասան և մեռածներն ու վիրաւորեալները հիւանդանոցները փոխադրեցին շատեր որ թեթեւ վերքեր ստացած էին իրենց տուներ : զացին կամ տարուեցան :

Ուրեմն մօտ ժամը տասն էր երբ արկածը պատահեցաւ, նոյն միջոցին կ'ըսէին ոմանք թէ՛ 100 հոգի մեռած կամ վիրաւորուած էին, ոմանք կ'ըսէին թէ՛ 30-40-45 և մինչև 60 հոգի մեռեր են . բարեբաղտաբար այսօր հաստատապէս գիտենք թէ միայն երկու հոգի մեռած են և 28 անձինք ծանրապէս վիրաւորուած : վերջիններէս մին ալ մեռեր է երեկ . իսկ թեթեւ կերպով վիրաւորուողները շատ աւելի են :

Արկածը վերադասելու է ժողովրդեան անզգուշութեան և ոչ ուրիշ բանի :

ՄԵԼԻՔ Ս . ԴԱԻԹ ԲԷԿ

ԱՒԱՐՏԱԾ Է

ԿԵՆՏԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՇԵՐ

S . Z . Թ . ՍԱՒԱԼԱՆ

Սոյն հետաքրքրական գրքոյքը՝ մաքուր տպագրութեամբ ու աւելարդ հեղինակին կենդանագիր պատկերովը՝ կը ծախուի S . Կ . Երզնկացեանի խանութը ի Շարա Ապտիւլ Աղիլ և կամ S . Կ . Նաւասարգեանի քով :

Գինն է 5 դահեկան ողջ Եգիպտական Վճարմունք կանխիկ :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 26 ՕԳՈՍՏՈՍ 1900

3516	876	7459	3813	5909	1790
848	6867	1206	6605	1222	2614
7774	3895	2366	6703	4665	490
741	331	6448	5116	3156	4327
4795	5726	2628	1409	2126	4806

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտիկն եւ Նուագածուաց խմբի
Զօրանոցիկն ճիշտ դիւնացր

ՕՉԱՆՆԵՍ ՍԻՄՈՆԵԱՆ . ԵՒ
ԳԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ՐՆԿ .

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ աղ-
գայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար
օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմ-
պելիներով յողնած մտքերը կազդուրելու
համար, կրնան գիտել ԵՓՐԱՏ ՍՐՃԱՐԱՆԸ ,
որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ
հոգածութեամբ և ինամով զարդարած և
յաճախորդաց հանգիստը ի նկատի ունենա-
լով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ գը-
րած է :

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին
զովարար ըմպելեաց ամենամաքուրները .
ընտիր և թարմ օշարակներ , անխարդախ
սուրճ և անխառն կաթ :

Հոն գիտող յաճախորդք գոհ պիտի
մնան , գտնելով մաքուրութիւն , ճաշակաւոր
սպաս և անթերի ծառայութիւն , ամենէն
խստապահանջները գոհացնելու աստիճան :

ՀԱՅ ՃԱԾԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂՐԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊԱՀ

Նեա՛վ՝ Գիւնիկիւնի Դեղարանին դիւնացր

Որ և է կերակուր պարտահամ և սը-
նընդարար ըլլալու համար պէտք է , մտի ,
իւղի , բանջարեղինաց լաւագոյն տեսակը
ընտրել . այն համոզմամբ որ անդարար կե-
րակուրը ստամոքսին կենսատուն է , ով
որ ստամոքսին յարմար կերակուր չընտրեր
պարտական թշնամանանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը
հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ
ճաշարանը , վստահ ըլլալով թէ՛ գոհու-
թեամբ պիտի մեկնին :

Գիւնիկի ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ .

ՀԱՒԱԲԱԾՈՅ

ՀԱՏՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՆՏՈՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՅ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-
ներու աջակցութեամբ եռաձայն և քառա-
ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն
գնել փափաքողներն կամ լատանորդագր-
ուիլ ուզողներն, կրնան գիտել՝ Արշալոյս ի
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր — Տնօ-
րէնին :

Յապրուքիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՆ ԱԶԻՁԻ ՍԿԻՋԸ

Օտանիյի դեղարանին դիւնացի փողոցին մեջ .

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առա-
ւօտեան ժամը 7 Էն մինչև երեկոյեան ժամը 8 :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,
կ'ընդունուին .

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիտեր,
Հրախրաւորներ, Մանագրներ, Տեղեկագիրներ,
Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճա-
ռականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահաշուութիւն և
չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՆԻԿ ԵՆ .

ԿՈՊԷՌՈՒՄԵՆԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ .

ՆՈՐ ԼՈՒՍՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր
լուսանկարչատուններու մէջ աշխատելով,
արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ
փորձառութիւն ստացած է :

Պոլսոյ մէջ Ապտուլահ Եղբարց տան,
ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու,
քաղաքի մէջ վերջին անգամ Լէ. քէճեան
գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը
վարած, այժմ առանձին գործատուի մը
կը հիմնէ Էօզպէֆիյէ Շարխա Գամալէ Օթիլ
ՇէֆէրՏՍԻ ճիշտ գիտաց թիւ 3 արարթըմանին
երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսա-
նկարներ, ինչպէս եւ դուրսը կուտիներ
ի հարկին :

Ակրանսիանան ընական մեծութեամբ .
Կենդանապիւրներամերիկեան մե. քենայով
որոնք երբէք չ'են աւրուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մե-
ծութեամբ ընական դոյներով միմեարիւր .
Իւրաներկ եւ ջրաներկ պատկերներ և շն .
Լուսանկարի եւ պատկերահանութեան
վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն-
դունի որքո՞ւ, սեյէշոքրուան եւ շն .
Իրեն գիտող յաճախորդներն հանել տուած
լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր
մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌԲԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ուր
և է ընտրութենէ մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
ԻԳԻՏԻՐԷ

ՏՕՔԹ . Ա . Յ . ՔԵՐԵՍՄԹԻՃԵԱՆ

Ի Շարխա Գոյր-Պէյ, քիւ. 20

Իր ՁրԻ խորհրդակցութիւնները ասկից
վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ
ժամը (ը. և.) 9 Էն 11 օրոշած ըլլալով կը
խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտու-
թիւն իրեն գիտել ուզող աղքատ հիւանդ-
ներու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Մերունի Տիար Ս . Ֆէլէկեանի վերո-
յիշեալ հեղինակութեան ՁՈՐՐՈՐԻ ֆորման
ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք ,
ինչպէս արդէն ծանուցուած է , կրնան գի-
տել « Արշալոյս » ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱ-
ՐԱՆԸ . ուր հեղինակը կը գտնուի կէս
օրէ վերջ ժամը 5- 7 :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 26 ՕԳՈՍՏՈՍ 1900

9454	5659	7414	2732	1500	6824
7080	1857	1357	39	3332	1324
3932	8521	5617	9445	48	5461
9399	3168	1137	5190	2098	6308
6560 4718 4165					

ՏՕՔԹ . ԺՈՐԺ Փ . ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Ապսիկ Շարա Գուպրի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակուաներ :

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակուայի
ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով լուր
պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում,
ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ ուր և է ըն-
կերութենէ աւելի երաշխաւորութիւններ ,
ընդարձակ գործառնութիւններ և հրապա-
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱ-
կատար յ'Աղեքսանդրիա .